

ՓԱՓԱԶԵԱՆ, Վ. — Արդար գատաստան։ Մի պատկեր, «Պատկերներ թիւրքահայոց կեանքից» զրուածքից։ Վ. Փափազեանի, հասոր ա. Սոսկւա, 1891 թ. 327 երես, զինն է 1 ր. 50 կոպէկ։

Կեանքից վեր առած պատկերի արժանաւորութիւնը գոլութիւն ունեցող կեանքի և նրա սուերի խոր մթութեան մէջ թաղած եղծումների¹⁾ ճշմարիտ նկարագրութիւնից է կախւած։ Տիպերը և արկածները որքան ուշալական են, անքան խիստ տպաւորութիւն են թողնում ընթերցողի վերայ որն իրան և շուրջը կենդանի զողներով տեսնելով ազդ հազերու մէջ՝ լրջմտաբար սկսում է մտածել աիրող զրութեան մասին։

Որքան հեռանում է պատկերը իրական կեանքից, անքան թուզանում է նրա տպաւորութիւնը։

Պատկերների մէջ մնաք ուսումնասիրում ենք զողովրդի ժամանակակից կեանքը. առասպելացնելով նկարագրութիւնը՝ առասպելացնում ենք և գոլութիւն ունեցող կեանքը (պատմութիւնը)։

Պատկերի գեղարւեստական բաժինը որքան որ ազատ լինի, պատմական, աշխարհագրական, քաղաքական, տեղական կեանքի նկարագրական մասը պէտք է որ իսկութեամբ զուրս բերվի ննչպէս թուրքին պարսկի շոր չի կարելի հաղցնել անպէս էլ պարսկին չի կարելի

¹⁾ Լնչու միան աղծումներին և ոչ կեանքի հանդամանքների և մարդկանց լարաբերութիւնների առհասարակի խմբ։

թուրքերի եղանակով երգել տալ, նամանաւանդ մնջ՝ Ռուսահայերին, որ անքան կարօտ ենք ծանօթիւնան թուրքահայերի առօրեակ կեանքի հետ, անհրաժեշտ է ունենալ ազդ ժողովրդի կեանքից ճշգրիտ պատկերներ, որ լուսաբանեն մնզ նորա դրութիւնը։

Տաճկաստանը ճանաչելու կարիքը մասամբ լրացնելու համար վերջին տարիներս կովկասում և Ռուսաստանում տպագրուեցան զանազան զրքուկներ, որոնց մէջ մեծ թիւ են կազմում պ. Վ. Փափազեանի պատկերները որոնցից մի քանիսը նախապէս առանձին առանձին տպագրուեցան, թէ պարբերական թերթերում և թէ զրքուկներով, Որպէս բնիկ թուրքահակ (Վ.անեցի), զողովրդի ամեն զասակարգի մէջ մտածելած և ազդ երկրում բաւական ճանապարհորդութիւններ կատարած, պէտք էր, որ պ. Փափազեանը մնզ տար անպիսի պատկերներ, որոնք մնզ ճշշտութեամբ ծանօթացնէին իրական կեանքի հետ։

Յալտանի բան է, որ թուրքիակի վարչական բոլոր զործերի մասին հետաքրքրում է և զիտնական աշխարհը։ Շատ եւրոպացի ճանապարհորդներ մասել են Յամաննան բոլոր կալւածները և շարունակում են խուզարկել ու քննել, թուրքիակի ոչ միան զատավարութիւններն ու դա-

տաստանագրքերն են թարգմանւում, ալ եւրոպացի ճանապարհորդները քննում են և՝ ժողովրդի առօրեակ կեանքը, և՝ պաշտօնեաների նիստ ու կացը, և՝ հարստահարութիւնները, մի խօսքով այն ամենը, ինչով որ հետաքրքրում ենք և մենք Ալի էլ լավոնի է, որ ճանապարհորդների մածագոյն մասը, որպէս թիւրքասէրներ և թիւրքերից առաջնորդած մարդիկ, աւելի հականէտ են նրանց պաշտամնելու, նրանց բարձրացնելու խակ թէ համեմատական քննութիւնները որքան կարող են վար զցել արսպիսի անձիշտ և առասպելացրած պատկերների վարկը, ասելու կարիք չկար

Կոր պատկերներով պ. Փափառքանը ման է գալիս ամբողջ Տաճկանակը և վերջին երկու ԱՍ կղզին և «Արդար դատաստան» պատկերներով գնում է Սուլթանի և Շահի մալրաքաղաքները

ԱՍ կղզու մասին ասելիք չունեմ, որովհետև Պարսկաստան անձամբ ման եկած, քննած չեմ և ունեցած տեղեկութիւններս էլ շատ աննշան եմ համարում:

Այն, ինչ ինձ ստիպեց այս նկատողութիւնը գրելու, ալդ՝ պ. Փափառքանի կ. Պոլտում կատարել տւած «Արդար դատաստան» է:

Եթէ կ. Պոլտում ապրու մի հայ կամ օտարական վեր առնէ, կարդաւ ալդ՝ «Արդար դատաստան»-ը՝ չը գիտեմ ինչ գաղափար պիտի կազմէ պ. Փափառքանի և մեր՝ կովկասեցիներիս վերաւ իմ խօսքը ոչ թէ պ. Փափառքանի պատկերների մասին է առհասարակ, ալ միմիակն «Արդար դատաստանի մասին, որի

նկարագրական մասը իրականութիւնից չեղում է և նորն իսկ ստուերէ զցում նորա միա պատկերների վերաւ, որոնք, արդար է խոստովանելը՝ իրական կեանքին բաւական մօտ են:

Որպէսզի ալդ սխալը օտարները մեզ ցուց չտան, որոշեցի իրականութեան հետ ծանօթացնել «Մուրճ»-ի ընթերցողներին:—

«Արդար դատաստանի»-ի առաջին տողը սկսում է. ակ. Պոլտու Ա. Դ. Լի է ի (արդարութեան) Ատեանը ամսում 25-ին, ժամը 10-ին հ ըամակում է ձեզ ներկայանալ իւր դատարանը և վկացել Ա... Յ... եանի գործի մասին»...» (Էջ 259), Հէնց ալդ առաջին տողի՝ առաջին երեք բառերը սխալ են: Ակ. Պոլտու Աղյլիէլի ատեանը չկար. Ա. Հ. քեամը-Ա. Դ. Լի է (արդարութեան դատարան) մէկ է Օսմանեան պետութեան մէջ և երբէք չի գրում ակ. Պոլտու Աղյլիէն, ինչպէս չնա ասում Ը. Պետերբուրգու Պարտական Պատերակութիւն Սենատը, ալ-ուղղակի Պատերակութիւն Սենատը. Ահքամը-Աղյլիէն երբէք խնդրասու, պատասխանատու կամ վկաչ չի հրավիրում: Եթէ հեղինակը իրաւաբանական տարրական հմտութիւն ունենար, կ'իմանար՝ որ ալդ դատարանում, որ կազմում է Հուգուգի (քաղաքացիական), Թիջարէթի (առևտրական), Զինակէթի (բրէւական), Թէմիզների (վճռաջինջ, հասպօնութիւն) ատեանների բոլոր անդամների խառն ժողովից, ուր քննուում են միմիակն արտակարդ դատաստանական գործերը: — ալդ իմացողը իրան այն տեղ

վկալ հրաւիրաւծ չէր ներկասաց-
նիլ այն էլ ժամը 10-ին, (մեր ժա-
մով դալիս է երեկոյեան ժամ
4—5-ին), երբ և. Պոլսի բոլոր վար-
չական աստեանները փակւած են լի-
նում:

Բայց զարմանալին այն է, որ
Սութան Ազիզի գահակալելոց ի-
տու մինչև օրս՝ եւրոպացիներին կու-
րացնելու համար և. Պոլսի զատա-
րաններում թիւրքերը արտաքուստ
անքան մանրամասն ձևական օրի-
նապահութիւններ են անում, որ չա-
փազանցնում և ծիծաղելի ծարքա-
կեռութեան են հասցնում ամեն գործ.
այն ինչ պ. Փափազեանը ուզում է
մեզ հաւասացնել, որ պոլիցիական-
ներն են իրան ներկավացրել հրաւի-
րաթերթը (ՊՈՎԵՏՔԱ) և. Պօլսի
Ագլիէի ատե անը բո գնալու Ամ-
բողջ աշխարհ գիտէ, որ զատարան-
ներն առանձին համազգեստով ծա-
ռաններ ունին, ոչ նման պոլիցիա-
կանների շորերին. դոքա են միան-
չանձում զատաստանական բոլոր
թղթերը իրանց հասցէին. (կարդա-
ցեք թուրքերի օրէնքները և թեր-
թեցէք այն բոլոր զատավարութիւն-
ները, որոնք արտատպմել են եւրո-
պական թերթերում. Փակտը անհեր-
քելի է): Աւ հրաւիրաթերթը իրան
հասցնում են երեսկավակական պոլի-
ցիականները հէնց աչն օրը, երբ
պիտի քննէր ալդ գործը, Ախամը նմա-
նը ուրիշանգամ չը պատահած բան է,
Դեռ ալս հերիք չէ, նա (269 երես)՝
վկանների և զատ ունեցողների մի
ահազին խումբ սոււարիներով¹⁾ պո-

լիցիալից դատարան է բերում, որոնց
խկոյն սղափու ալթիո դրան ետևն
են զցում, Զարմանալի է, որ ալ-
քան չուտ-շուտ են շինում սղափու
ալթիո-ները և քանդւում ալդ
զատարանի նրբանցքներում, առաջ
շիար, լետու էլ չկար, երեխ դրանք
շինուել են հէնց միան հեղինակի
համար, ա...էս ժամից լետու Ա. գ-
լիէի դատարանը մասաւ Սա
մի մեծ չենքէ Ա. ա-Ս ո ֆ ի ա
մզկ ի կ ի մօտ... (259 երես).
Չեմ հասկանում. Աղլիէն Բարձրագուն
Դրան մեծ շինութեան մէջն է, որ
տեղ է և ինքը Աղլիէ Նազըը (ար-
գարութեան մինիար). Բնչպէս զուք
ահազին շինութիւնը մի վերաս հեռու
Աւա-Սովիալի կողմն էք տեղափոխում
թիւրիմացութիւնը լառաջացել է
նրանից, որ հեղինակը զատարան-
ները խառնում է «Աղլիէի» հետ
Աւա-Սովիալի մօտ «Աղլիէ զատարան»
չկալ, անտեղ Բիդաէթն է, (ոչ թէ
հաշտարար, ինչպէս անւանում է
պ. հեղինակը, թուրքերը հաշտարար
զատարաններ չունին, ալ-հանանդա-
կան—Օկրյանում օչդէ), Խթինափ
(Պալատ) և թէմիզը (ռասազ. դեպարտ.),
այն էլ երեք մասի բաժանաւծ. քա-
զաքացիական (Հուգուգ), վաճառա-
կանական (Թիջարէթ) և քրէական
(Զինալէթ) և բոլոր զատաստանական
ասեանները և. Պոլսի:

Բայց զարմանում եմ մանաւանդ
զատարանների նկարադրութեան իե-
րակ. Աս հինգ տարի շարունակ մուել
եմ ալդ զատարանները և երբ էք
չեմ տես ու ուսները բորիկ, կուրծէ
քերը բաց և ֆէսերը ծոծրակի վրա.
դրած էֆէնտիներ, վաեմաշուք է լ-

¹⁾ Հեծելագօր:

ւեր... ջրամանը ձեռքերին նրբանց քով արտաքնոց դնալիս (260 երես). այն ինչ շատ լաւ լիշում եմ, որ ալդ է փենտիները արշինը երկու լիրանոց ընտիր չուխավից կոկիկ սերտովները հագին, ձիւնի նման սպիտակ օսլա. լած շապիկներովէ քնքոյն ձեռնոցները ձեռքերը, բարալիկ ձեռնափալ- տերը շարժելով մտել եւել են, որոնց կաշութիւ ոսկիներով լքցւած գրպան- ները միշտ դատարկել են եկոպացի զերծակները և մողակի մագաղինա- տէրերը.

Ագօ, վան, Մուշ, էրդոսմ՝ հա- մաձան եմ ձեղ հետ, կան գրագիր- ներ, որոնք «ծալապատիկ նստած ձնկի վերակ գրում են մինչև օրս պաշտօնական բոլոր թղթերը». բայց Կ. Պոլսի դատարանների քննիչներին (ոչնչութեալ) մի ձնկների վրակ գիր զրմէ տաք, ան էլ չսրբին մի ալդ- քան ահռելի կեղտոտ սենեակ բերե- լով քննութիւն ու մասնարութիւն մի անել տաք, թող գրասեղանների վրակ նստեն ալաֆրանկա, թիշեցք, որ ալդ քննիչների մօտ անդադար մտնում են դատախազները, դատա- րանների նախագահները և օտար պէ- րութիւնների կոնսուլների թարգ՝ մանները, թուրքերը ահքան վիմար չեն, որ Կ. Պոլսում՝ դեսպանների քթի տակ ալդ աստիճան անկարգ պահն իրանց ատեանները.

Եթէ հեղինակը ալդ ահագին նոր (1865 թ. շինւած) շինութեան մէջ մտած լինէր, որ չորս անդամ ամելի մնծ է թիֆլոսի նահանգական և պա- լատի դատարանի շինութիւնից, լու- սամուռների մթութեան մասին գան- գատ չէր անիլ. բայց երևակալու-

թիւնը շատ անգամ սիսալում է, Քննութիւններ կատարելիս իրը թէ ուսումնականում են. եթէ ալդ ասէիք պարսիկների համար կարելի է հա- ւատակի. որավիշտեւ տեսել եմ, որ Մուհարլէմիր հանգէսների գիշերները նրանք մզկիթում նարկիլէ են քա- շում, չերեւթներ էլ են խորում:

Անկարելի է Ատամբուլ տեսնել և ախտելի թրքուհներին ֆարաջալից հանել և չարսաֆների (սաւանի) մէջ փաթաթել և ալդ սաւանի ծալրովն էլ ստիպել մարդուց երեսը ծածկել (262 երես), կամ բանալ (263 երես) և կամ «թէմէնէ» անել (264 երես), ինչ կարիք կատ Կ. Պոլսի թրքուհների երեսը բանալ (265 երես), քանի որ նրանք պարսկու- հիների նման ամբողջ քօղով չեն ծածկում և նրանց ունքերը, աչ- քերը, ամենը, քիթը բոլորովին բաց են. պուրենստ?! (երսի երեսի ծած- կոց) չանին. եաշմազն էլ վուալից թանձր չէ:

Բայց զարմանալի և հակասական են հեղինակի բոլոր նկարագրու- թիւնները. նա լանցաւորներին Բի- դակէթ է տանում, ալմինքն նոր օրինքով կառավարող դատարան, որի մէջ նախագահնը՝ զանազան կրօնի անդամներով օրէնքների անունով վճիռներ է կալացնում. և ալդ ան- դամներին ամոցնում է փոքրիկ սե- նեակներ լւացմելու, աղօթելու, ծխե- լու, ուսելու, խմնուա և լանկարծ Եկեղիւթիւնամի դռնից մի զաղի (կրօնական դատաւոր) է մացնում ալդ դատարանները և նրանքեւ վճիռներ արձակում. և ինչպէս...— դրչի ծալը շարժելով.

իսկ պոլիցիալում պատահած կօշխներ հանել տալու և գուլպալով ազբանոցը բանտարկելու ստորութեան մասին՝ ինքը հեղինակին անդամ կասկածում է. և դիւրահաւաստը թերցողներին համոզելու համար՝ ծանօթութիւնով (էջ 279) ուղարկում է Ա. Պոլսի դատարանները վերաստուգելու, իբր ով չի հաւատում, թող գնաէ ստուգէ, Ուղիղ է, որ դատաստանական ատեաններում սովորութիւն է մասնպնդները վերարկուն, կրկնակօշխները, ձեռնափախտոն ու հովանոցը լանձնում են նրբանցքում դրա համար կարգադրւած ծառաներին, որոնք ստացած առարկանների համար խկոն Նե են տալիս և պատասխանատու են իրանց լանձնած իրեղիների համար. բայց լսւած բան չէ կօշխները հանել և գուլպալով մանածել.

276 երեսում նկարագրւած է Բիդաէթի նախագահը, որը իբր թէ մի զաղի է. Բայց չ՛ որ զաղիների Կ. Պոլսի դատարաններից արտաքսելուց քսանհինդ տարի է անցել և լետով. ինչ կասեն Կ. Պոլսում ապրազ եւրոպացի փաստաբանները և կոնսուլների թարգմանները, որոնք ամեն օր ներկալ են ալդ ատեաններում, երբ կարգման պարագի պատից տողարկներու կախւած թղթերը, լստակի վրավի թղթի մանրուկը, պանըրի կտորները և եղեգի գրչի կարածքները» Միթէ ալդ բանները նրանք տեսնում են չեն վրշառակում իրանց զեկուցումների մէջ, Դատաստանական սրանի միւս մասում լստակի վերակ իբր թէ խալիներ են փառած (էջ 279). մինչդեռ 70-ական

թւականներից շնուած էին թիկուն. քավ նստարաններ, ետեւի կողմինները առաջնուններից աստիճանաբար բարձր. թէ խմելու (էջ 277 երես) գործիքներ էլ կալին ալզտեղ թափթփւած, կոտրած, պատուած առարկանների մէջ, ուրեմն Կ. Պոլսի թուրքերն էլ սկսեցի չափ խմել...

Պ. Փափազեանը եթէ մօտից ծանօթ լինէր Կ. Պոլսում ապրող դատաւորների հետ, մոտած լինէր նրանց տները, ներկալ լինէր նրանց դատավարութեանը, անպիսի հաշողանքներ (279 երես) չէր զնիլ և ապա հիբրանը (մինչև ալժմ դատի էր ասում): Ազդ խրամանկ և ծանրաշարժ արարածները ընդհանրապէս ալճքան համեստ և լուրջ դիրք են բռնում դատավարութեան ընթացքում, որ դատավարեալի արիմը ծծել ցանկացած բոպէին անդամ պատրաստ են ժպտալու, հաճողանալու իրաւագուրկ թշւառին և անմնդ ձևանալու: Ազդ բանը կարմիր է նկատել 1891 թ. «Արաքսուի համարում հրատարակւած դատաւարութեան պատմութեան մէջ եւ.

Կրծատելու համար մի վերջին նկատաղութիւն էլ անենք և վերջացնենք «Արդար դատաստանուի դատաստանը»:

Պ. Փափազեանը ալճքան անծանօթ է իւր նկարագրած կեանքին: որ քաղաքացի ալ ական դատարան (Բիդաէթի հուգուգ) եղած ժամանակ վարել է տալիս իւր երեսակալական փաթթուցներով դատաւորին սիղէմբէ-չորւանսիփիքքէական գործը (279 երես) և ապս ալճ տեղից գուրս գալում ընթերցողներին էլ իւր հետ

տանում է քըրէական դատարան (Քիդակէթի ջինակէթ), որտեղ նորից մի զաղի ևս գտնում (ալդ ատեաններում զաղի չկա). շէլսիկւկալամի դուանը վնտրեցէք զաղիներին) և 5—6 կոկիկ հագնւած անդամ. Ների հետ նստեցնում կաչու գործարանատիրոջ և բանւոր պարակի զատը քննելու համար. Գուցէ հեղինակը կարծում է, որ ճակատ կոտրելը փոքր լանցանք և թերը գործարանի անիւկ տակը թողնել տալը մնե լանցանք. բայց քրէական լանցանքը քրէական է մնում, հետեապէս քաղաքա-

Պատկերի մէջ դուրս են բերւած Բոսֆորի Հիսար Բուրնիր արւարձանում թիւրք, իսլամ դործարան ատէր և պարսիկ էլ մեքենան ավար. Մեզ թում է սակալնոր ալդ բաներ երևակակական է, Ալրզար գատաստան» պատկերով, ինչպէս երեսում է, հեղինակը աշխատել է մեզ ծանօթացներ կ. Պոլսի գատարանների հետ. բայց ալդ երևակակական պատկերով ստեր է գցել իւր միւս պատկերների վրաէ. որոնք, ինչպէս վերն էլ ասացինք իրական կեանքին բաւական մօտ են, ցիական դատարան չի մտնիլ.

Ա. Ա.

Նոր ստացւած գրքեր

1) ՍՊԵՆՍԵՐ, Հերբերտ.—«Դաստիարակութիւն մտաւոր, բարուական և ֆիզիքականու թարգմ. Մկրտ. Ղազարեանց, Հրատ. Թիֆլիսի Հրատարակչ Ընկ., Թիֆլիս, տպ. Ռոտինեանցի, 1892 թ., գինն է 1 ռուբրի,

2) ՇՄԻԴՏ, Օ. Ի.—«Մըռուանու թարգմ. ոռուաերէնից Անուշ. Քաղաքարար, Հրատ. Թիֆլ. Հր. Ընկ., Թիֆլիս, տպար. Արօր Տ. Նազարեանի, 1892 թ., գինն է 20 կոպէկ.

3) ԱԼԹՈՎԱՆ, Ն.—«Խան Միրան» (աւանդական պատկեր թահմազշահի Վասպուրականի արշաւանքից), Հրատ. Թիֆլ. Հր. Ընկ. Թիֆլիս, տպ. Արօր Տ. Նազարեանի, 1892 թ., գինն է 20 կոպէկ.

4) ԳՈԳՈՆ, Ն.—«Տարաս Բուլյա», թարգմ. Մ. Արեգեան, Հրատ. Թիֆլ. Հր. Ընկ. Թիֆլիս, տպ. Ռոտինեանցի, 1892 թ., գինն է 40 կոպ.

5) ԱՂԱՅԵԱՆՑ, Պ.—«Արկու քուլու» Արկուորդ տպադր. Հրատ. Թիֆ. Հր. Ընկ., Թիֆլիս, տպ. Շարամէ, 1892 թ., գինն է 25 կոպէկ.

6) ՇԻՐԱԿԵՑԻ. —«Մարօն», պատկեր իրական կեանքից, Բ. Ալեքսանդրապոլ, տպ. Գ. Սանովեանցի, 1892 թ., գինն է 5 կոպէկ.

7) ՍԵՆԿԵՆԻԶ, Հ.—«Փարսսի վերաբ», թարգմանութիւն ռուսերէնից, Մոսկա, տպ. Մ. Բարխուդարեանցի, 1892 թ., գինն է 10 կոպէկ.

- 8) ՍԱՀԱԿԻԵԱՆՑ, Սահակ Քահան. — «Դասաւոր կրօնի» Ա. տարի. Թիֆլ., տպ. Շարամէի, 1892 թ., գինն է 15 կոպէկ.
- 9) ՍԱՀԱԿԻԵԱՆՑ, Սահակ Քահան. — «Դասաւոր կրօնի» Բ. տարի. Թիֆլ., տպ. Շարամէի, 1892 թ., գինն է 20 կոպէկ.
- 10) ՍԱՀԱԿԻԵԱՆՑ, Սահակ Քահան. — «Դասաւոր կրօնի» Գ. տարի. Թիֆլ., տպ. Յ. Մարտիրոսեանի, 1892 թ., գինն է 20 կոպէկ.
- 11) ԶԱՐԱՐԱԼԻ. — «Երգիչ Զամալու քնարական երգերը», Ալեքսանդրա-պու տպ. Արք. Մալխասեանցի, 1892 թ., գինն է 20 կոպէկ.
- 12) «ՄԱՆԿԱՎԱՐԺԱՎԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆ», Հրատարակիչ Յովհաննէս Բարխուզարեանց, Գիրք Ա., Մոսկա, 1892 թ..
- 13) ՄԱԼԻԱՍԵԱՆՑ, Ստ. — «Գրաբառի համաձայնութիւնը», Հրատ. Կենդր. Գրավաճառանոցի, Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1892 թ., գինն է 50 կոպէկ.
- 14) ЕРИЦОВЪ, А. — „Исторія холерныхъ эпидемій въ Закавказье“. Եւ գորա հետ կից՝ „Чума въ Закавказье“. Тифлісъ, 1892 г. գինն է?
- 15) ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ. — «Գրախափի Ընտանիք», 2-րդ տպագրութիւն, Հրատ. Թիֆլիսի Հ. Հրատ. Ընկ., տպ. Մ. Ռոտինեանցի, 1892 թ., գինն է 60 կոպէկ.
- 16) ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ. — «Սիրաք և Սամուէլ». Բարի հօր կրթական դասեր ի նույր հարց հարց և զարդացեալ որդւոց, 3-րդ տպագրութիւն, Հր. Թիֆ. Հ. Հրատ. Ընկ. Թիֆլիս, տպարան Մ. Ռոտինեանցի, 1892 թ., գինն է 50 կոպէկ.
- 17) TER-MIKELIAN, Arschak, Dr. — „Die armenische Kirche in ihren Beziehnugen zur byzantinischen“ (von IV. bis zum XIII. Jahrhundert). Leipzig, Gustav Fock, 1892 թ., գինն է 2 մարկ.
- 18) ՔԱՐԱԿԻԵԱՆՑ, Ս. — «Հեքիաթներ», Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1892 թ., գինն է 30 կոպէկ.